



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



## **ՍՐԲԱՉԱՆ ՀԱՅՐԸ ՊԻՏԻ ՆԱԽԱԳԱՐԷ «ԼԱՐԶ» ԵՐԱԺՇՏԱՆՈՑԻ ՆՈՐ ԿԵԴՐՈՆԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Ա. Արք. Մարտիրոսեան, Երեքշաբթի, Հոկտեմբեր 17-ին, ընդունեց այցելութիւնը Լարք երաժշտանոցի հիմնադիր ու տնօրէն՝ Տիար Վաչէ Պարսումեանի: Հանդիպումը առիթ մը եղաւ տեղեկութիւններ փոխանցելու Լարք երաժշտանոցի եւ երգչախումբի ապագայ ծրագիրներու մասին:

Նկատի ունենալով որ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Հոկտեմբեր 2005-ին Թեմիս շնորհած հովուապետական այցելութեան առիթով Տիար Վաչէ Պարսումեանին պարգեւատրած էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, Առաջնորդ Սրբազան Հայրը Տիար Պարսումեանին յանձնեց Վեհափառ Հայրապետին կողմէ իրեն շնորհուած շքանշանին Հայրապետական կոնդակը:

Յայտնենք, որ Կիրակի, Հոկտեմբեր 22, 206-ի կ.ե. ժամը 3-ին, յատուկ հրաւերի մը ընդառաջելով Առաջնորդ Սրբազան Հայրը պաշտօնական բացումը պիտի կատարէ Լարք երաժշտական Ընկերակցութեան նոր կեդրոնին: Սրբազան Հոր պիտի ընկերանայ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիկիւմեան: Երաժշտանոցի նոր հասցէն է 543 Arden փողոց, Կլենտէյլ:

Նոյն օրը երեկոյեան ժամը 6:30-ին, համերգ մը տեղի պիտի ունենայ Glendale Presbyterian եկեղեցւոյ մէջ, կատարողութեամբ Լարք երգչախումբին: Առաջնորդ Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Հոգ. Պարթեւ Վրդ. Կիլիկիւմեանի համերգին եւս ներկայ պիտի գտնուի ու պիտի փոխանցէ իր օրհնութիւններն ու յաջողութեան մաղթանքները:

## **PRELATE TO PRESIDE AT THE OPENING CEREMONY OF THE NEW LARK CENTER**

On Tuesday, October 17, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, met with LARK Musical Society founding member and president Mr. Vatsche Barsoumian, at which time Mr. Barsoumian updated the Prelate on LARK's future projects.

In October of 2005, during the Pontifical Visit of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, His Holiness bestowed Mr. Barsoumian with the "St. Mesrob Mashdots" medal. At Tuesday's meeting, the Prelate presented Mr. Barsoumian with the Pontifical Encyclical corresponding to the medal.

On Sunday, October 22, the official opening ceremony of LARK's new premises, located at 543 Arden St. in Glendale, will take place at 3:00 p.m. The Prelate, accompanied by Very Rev. Fr. Barthev Gulumian, will conduct the opening ceremony.

At 6:30 p.m. of the same evening, the Prelate and Very Rev. Fr. Barthev will attend a concert by the LARK Orchestra Chorus and soloists at Glendale Presbyterian Church, where he will convey his blessings and best wishes.

## **ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՆԵՐԿԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՒ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԵԿՆԱՐԿԻ ՁԵՌՆԱՐԿԻՆ**

Կազմակերպութեամբ Հայաստանի Հիմնադրամի, Հինգշաբթի, Հոկտեմբեր 19-ին, երեկոյեան ժամը 7-ին, մեկնարկի (kick-off) ընդունելութիւն-ընթրիքը տեղի ունեցաւ Studio City-ի Bistro Garden ճաշարանին մէջ, հիւրընկալութեամբ՝ Տէր եւ Տիկին Ալպեր եւ Թով Պոյաճեաններուն:

Յանուն Առաջնորդ Սրբազան հօր, ներկայ եղաւ Արժ. Տ. Ռազմիկ Զինյ. Խաչատուրեան, ինչպէս նաեւ Ազգ. Առաջնորդարանի ներկայացուցիչ եւ Հիմնադրամի անդամ՝ Տիար Բեգլար Փիլաւճեան:

## **PRELATE REPRESENTED AT THE ARMENIAN FUND KICK-OFF**

On the evening of Thursday, October 17, the Armenian Fund kick-off reception and dinner took place at Bistro Garden restaurant in Studio City, hosted by Armenia Fund International Board Trustee Mr. and Mrs. Albert and Tove Boyajian.

Rev. Razmig Khatchadourian, Pastor of Holy Martyrs Church, represented the Prelate. Also in attendance was Prelacy representative and Armenia Fund Board member Mr. Peklar Pilavjian.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՆԿԱԽԱՅՄԱՆ 15րդ ՏԱՐԵՂԱՐՁԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ՈՒՎՇԻՆԿԹԸՆԻ ՄԵՋ**

Ուրբաթ, 20 Հոկտեմբերին, Առաջնորդ Սրբազան Հայրը մեկնեցաւ Washington, D.C., ներկայ ըլլալու Հայ Դատի նոր կեդրոնատեղիի բացման եւ Հայաստանի Հանրապետութեան վերանկախացման 15-ամեակին նուիրուած ձեռնարկներուն:

Շաբաթ, Հոկտեմբեր 21-ին, կ.ա. ժամը 11-ին, Washington, D.C.ի մէջ պաշտօնական բացում եւ ընդունելութիւն տեղի պիտի ունենայ Հայ Դատի Կեդրոնատեղիին: Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ սոյն հանդիսութեանց փոխանցելու իր շնորհաւորութիւնները եւ օրհնութիւնները:

Նոյն օրը երեկոյեան ժամը 6-ին, Հայաստանի դեսպան Տիար Թաթուլ Մարգարեանի հրաւերով յատուկ տօնախմբութիւն մը կազմակերպուած է նուիրուած Հայաստանի Անկախութեան 15-ամեակին: Ձեռնարկը տեղի պիտի

ուսենայ Washington, D.C.-ի Omni Shoreham պանդոկին մեջ, գլխավոր բանախօսութեամբ՝ Յայաստանի Արտաքին Գործոց Նախարար՝ Վարդան Օսկանեանի: Առաջնորդ Սրբազան Յայրը ընդառաջելով նախապէս իրեն տրուած հրաւերին, յանուն մեր Թեմին ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր շնորհաւորութիւնները:

## **PRELATE TO PARTICIPATE IN CELEBRATIONS FOR THE 15<sup>TH</sup> ANNIVERSARY OF THE INDEPENDENCE OF ARMENIA IN WASHINGTON, D.C.**

On Friday, October 20, the Prelate departed for Washington, D.C., to attend the opening ceremony of the new ANCA headquarter, and also to participate in a reception celebrating the 15<sup>th</sup> anniversary of the independence of Armenia.

The official opening of the ANCA office will take place on the morning of Saturday, October 21<sup>st</sup>, during which the Prelate will convey his remarks and blessings.

On the same evening, the Prelate will attend a special reception at the Omni Shoreham Hotel, hosted by H.E. Ambassador and Mrs. Tatoul Markarian, and featuring keynote speaker H.E. Vartan Oskanian, Minister of Foreign Affairs of the Republic of Armenia.

## **ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՅԱՏՈՒԿ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՄԲ ՊԻՏԻ ՊԱՏՈՒԷ ՊԱՏՈՒԵԼԻ ՊԱՐԳԵՒ ՏԱՐԱԳՃԵԱՆԸ**

Շաբաթ, 21 Հոկտեմբերի երեկոյեան, ժամը 6-ին, կազմակերպութեամբ Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութեան, ճաշկերոյթ մը տեղի պիտի ունենայ United Armenian Congregational եկեղեցւոյ, Փօլ Աւազեան սրահին մէջ, ի պատիւ Պատուելի Պարգեւ Տարաքճեանի 40 երկար տարիներու ծառայութեան:

Ձեռնարկին Թեմիս բարեջան Առաջնորդ Սուշեղ Արք. Մարտիրոսեանին պիտի ներկայացնէ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն՝ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան ու պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Հօր օրհնութիւններն ու շնորհաւորութիւնները:

## **ARMENIAN EVANGELICAL UNION GALA-BANQUET TO HONOR REV. BARKEV DARAKJIAN**

On Saturday, October 21<sup>st</sup>, the Armenian Evangelical Union of North America will honor Rev. Barkev Darakjian, for his 40 years of service, at a gala-banquet to be held at the Paul Avazian hall of United Armenian Congregational Church.

The Prelate will be represented by Very Rev. Fr. Barthev Gulumian, who will convey the Prelate's blessings and congratulatory remarks.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ  
ՅՈՒՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ 15-ԱՄԵԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ**

Շաբաթ, 21 Հոկտեմբերի երեկոյեան ժամը 7:30-ին, »Արարատ Տան« Mission Hills-ի «Տօքմէճեան» սրահին մէջ տեղի պիտի ունենայ Յունահայ Միութեան 15-ամեակի ճաշկերոյթը:

Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն՝ Գերպ. Տ. Միւռոն Ծ. Կրդ. Ազնիկեան, յանուն Առաջնորդ Սրբազան հօր, ներկայ պիտի ըլլայ սոյն ձեռնարկին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան հօր օրհնութիւններն ու շնորհաւորութիւնները:

**PRELATE TO BE REPRESENTED AT THE 15<sup>TH</sup> ANNIVERSARY OF THE  
GREEK-ARMENIAN ASSOCIATION**

On Saturday, October 21, the Greek-Armenian Association will celebrate its 15<sup>th</sup> anniversary with a banquet at "Ararat Home" in Mission Hills.

Prelacy Christian Education Co-Director Very Rev. Fr. Muron Aznikian will represent the Prelate and convey his blessings.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՓՈԽԱՆՑԷ ԻՐ ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ՔԵՏԱՊԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ**

Կիրակի, 22 Հոկտեմբերին, կ.ե. ժամը 3-ին, նկարչական ցուցադրութիւն մը տեղի պիտի ունենայ Reseda-ի «Կարպեան» սրահին մէջ: Գեղարուեստական յայտագիրը կազմակերպուած է Լոս Անճելըսի Քեսապի Ուսումնասիրաց Միութեան Մշակութային յանձնախումբին կողմէ: Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Արժ. Տ. Չաւէն Ա. Քիւնյ. Փոլատեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազանին օրհնութեան խօսքը:

**PRELATE CONVEYS HIS BLESSINGS TO THE KESSAB EDUCATIONAL  
ASSOCIATION**

The Kessab Educational Association has organized a cultural event, consisting of an exhibition of art works and books, to take place on Sunday, October 22, at 3:00 p.m., at "Garbian" Hall in Reseda.

Archpriest Fr. Zaven Poladian will represent the Prelate and convey his blessings.

**ՀՈԿԱՆԱԴՐՈՒԹԵԱՍԲ ԱՌԱՋԱՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ՝  
ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԶՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ**

## **ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ «ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ» ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ**

Կիրակի, 22 Յոկտեմբերին, երեկոյեան ժամը 6-ին, կազմակերպութեամբ «Նոր Զուղայի բարեկամներ» յանձնախումբին, տեղի պիտի ունենայ Իրանահայութեան ազգ. տարազներու ներկայացման ձեռնարկը, Կլէնտէյլի Յ.Մ.Ը.Մ. «Արարատ» մասնաճիւղի սրահին մէջ:

Ձեռնարկը կը վայելէ հովանաւորութիւնը Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազան Զօր: Սոյն ձեռնարկին Գերայ. Տ. Միւռն Տ. Վրդ. Ազնիկեան պիտի ներկայացնէ Առաջնորդ Սրբազան Զայրը ու փոխանցէ Սրբազան Զօր օրհնութիւններն ու բարեմաղթութիւնները: Ձեռնարկին ներկայ պիտի ըլլայ նաեւ Ազգային Վարչութեան փոխ-ատենապետ՝ Տոքթ. Յակոբ Տէր Մկրտիչեան:

## **FRIENDS OF NEW JULFA COSTUME SHOW TO BE HELD UNDER THE AUSPICES OF THE PRELATE**

On Sunday, October 22, under the auspices of the Prelate, the Friends of New Julfa have organized a costume show of traditional Iranian-Armenian costumes at the hall of the Homenetmen “Ararat” Chapter in Glendale.

Very Rev. Fr. Muron Aznikian will represent the Prelate and convey his blessings and best wishes. Dr. Hagop Der Megerdichian, Co-Chair of the Prelacy Executive Council, will also be in attendance.

## **ՍՐԲՈՑ ՆԱՅԱՏԱԿԱՅ ԶԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑՈՅ ՂԱՍԱԽՕՍԱԿԱՆ ՇԱՐՔԻ ԱՄՍԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ**

Չորեքշաբթի, Յոկտեմբեր 25-ին, երեկոյեան ժամը 7-ին, Էնսիւնոյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ եկեղեցւոյ Երիտասարդաց Միաւորի հոգեւոր լսարաններու Յոկտեմբեր ամսուան սերտողութիւնը:

Ձեկուցաբերն է Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան, որ պիտի ներկայացնէ «Զայ եկեղեցին եւ Աղանդները» սիւրճ:

## **HOLY MARTYRS MONTHLY RELIGIOUS EDUCATIONAL SERIES**

On Wednesday, October 25, the second lecture in the religious educational series organized by the Holy Martyrs Church youth association will take place. Prelacy Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian will speak on the topic “The Armenian Church and the sects”. The event is open to all ages.

## **ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԹՈՅԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԸ ՏՕՆԱԽՄԲԷ ԻՐ 40-ԱՄԵԱԿԸ**

Այս տարի Յոկոտեմբեր ամսուն կը լրանայ Սան Ֆրանսիսքոյի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հիմնադրութեան 40-ամեակը:

Այս առիթով յառաջիկայ շաբաթավերջին Ուրբաթ, 27 Յոկոտեմբերին, Առաջնորդ Սրբազան Յայրը պիտի ըլլայ Սան Ֆրանսիսքոյ, Եկեղեցւոյ հովիւին, հոգաբարձութեան, տիկնանց միութեան ու հայ գաղութին հետ եռօրեայ ծրագիրով մը տօնախմբելու Եկեղեցւոյ 40 տարիներու հիմնադրութիւնը՝

## **ST. GREGORY CHURCH OF SAN FRANCISCO CELEBRATES ITS 40<sup>TH</sup> ANNIVERSARY**

On the weekend of October 27, the Prelate will depart for San Francisco to join the parish community in celebrating the 40<sup>th</sup> anniversary of St. Gregory Church.

On this occasion, the pastor, board of trustees, and ladies association of St. Gregory Church have organized a three-day celebration, beginning on Friday, October 27.

## **ՅԱՏՈՒԿ ԳՆԱՀԱՏԱԳԻՐ ԹԵՄԻՍ ԲԱՐԵՉԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՅՕՐ**

Յոկոտեմբեր 17, 2006-ին Լոս Անճելըս Գաւառի 42-րդ շրջանի խորհրդարանի անդամ՝ Փօլ Գորեթցի կողմէ, գնահատագիր մը փոխանցուեցաւ Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազան հօր: Գնահատագրով խորհրդարանի անդամը բարձր կը գնահատէ Սրբազան Յօր Առաջնորդի դերը ու անոր տարած աշխոյժ գործունեութիւնը Թեմիս եւ գաղութիս մէջ:

## **CERTIFICATE OF RECOGNITION PRESENTED TO THE PRELATE**

On October 17, the Prelate was presented with a certificate of recognition from the Honorable Paul Koretz, Assembly Member for the 42<sup>nd</sup> District. On behalf of the California State Assembly, Assembly Member Koretz commended the Prelate's dedicated service and thanked him for his contributions and leadership.